947.925

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ «ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ 1908–1922 ԹԹ.»*

2022 թ. հոկտեմբերի 4-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի (ՊԻ) նոր պատմության բաժինը կազմակերպել էր միջազգային գիտաժողով՝ «Կիլիկիայի հայությունը 1908–1922 թթ.» խորագրով, որը տեղի ունեցավ ինստիտուտի նիստերի դահլիճում: Մասնակցության հայտ էին ներկայացրել շուրջ երկու տասնյակ հետազոտողներ ոչ միայն Հայաստանի Հանրապետությունից, այլև ԱՄՆ-ից: Գիտաժողովին ներգրավված էին մասնակիցներ ՊԻ-ից, Երևանի պատմության թանգարանից (ԵՊԹ), ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտից (ԱԻ), Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանից (ՀՊՄՀ), Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) հայագիտական հետազոտությունների ինստիտուտից, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամից (ՀՑԹ), ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտից (ԳԻ), ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտից (ՀԱԻ), նաև անկախ հետազոտողներ:

Գիտաժողովի մասնակիցներին բացման և ողջույնի խոսքեր հղեցին ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, *ՊԻ տնօրեն, ակադեմիկոս* Աշոտ Մելքոնյանը *և ՊԻ նոր պատմության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող, պ. գ. դ.* Ռուբեն Սահակյանը*: Իրենց ելույթներում նրանք նշեցին նմանատիպ գիտաժողովների կարևորությունն ու արդիականությունը, քանի որ ստեղծված աշխարհաքաղաքական այս բարդ իրավիճակում անհրաժեշտ է դասեր քաղել պատմությունից՝ խուսափելով անցյալի սխալներից: Ուշագրավ է, որ շուրջ մեկ դար առաջ հայոց պետականության ու հայության առաջ ծառացած խնդիրները և աշխարհաքաղաքական իրադրությունը գրեթե նույնական են:*

Գիտաժողովը բաղկացած էր երեք նիստերից: Առաջին նիստի (նախագահող՝ պ. գ. դ. Ռուբեն Սահակյան*) ընթացքում զեկուցումներով հանդես եկան՝ ԵՊԹ հնագույն և միջնադարյան պատմության բաժնի վարիչ* Անժելա Տերյանը՝ *«Հնագույն Կիլիկիա (մ. թ. ա. II–I հազարամյակներում)», ԱԻ գիտաշխատող* Կարոլինա Սահակյանը՝ *«Օսմանյան տարեգիր Ջևդեթ փաշայի անդրադարձը Կիլիկիային», պ. գ. դ.* Ռուբեն Սահակյանը՝ *«ՀՅԴ նախաքայլերը Կիլիկիայում հաստատվելու համար», անկախ հետազոտող* Մարիամ Հերդնյանը՝ *«Ապատեղեկատվության տարածման հոգեբանական հետևանքները ցեղասպանությունների ժամանակ (Կիլիկիայի 1908–1922 ջարդերի օրինակով)», ՀՊՄՀ պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան, պ. գ. թ., դոցենտ* Էդգար Հովհաննիսյանը՝ *«Կիպրոսում Կիլիկիայի հայ գաղթականների հաստատման գործընթացը 1909–1922 թթ.», ՊԻ ավագ գիտաշխատող, պ. գ. թ.* Հասմիկ Ամիրջանյանը՝ *«Ադանայի 1909 թ. կոտորածների արտացոլումն «Արարատ» ամսագրում», ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստի-*

---

* *Ներկայացվել է 02. XI. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

տուտի կրտսեր գիտաշխատող Անի Ոսկանյանը՝ *«Ադանայի նահանգի հայերի տնտեսական վիճակը 1909 թ. կոտորածից առաջ և հետո», ԱԻ գիտաշխատող* Անուշ Հովհաննիսյանը՝ *«1909 թ. Ադանայի կոտորածների վերաբերյալ պաշտոնական և այլընտրանքային մեկնաբանությունները արդի թուրք պատմագրությունում», ՊԻ առաջատար գիտաշխատող, պ. գ. դ., պրոֆ.* Սուրեն Սարգսյանը՝ *«Հայակիլիկիայի ինքնավարության հիմնախնդիրը՝ հայկական հարցի բաղկացուցիչ մաս» (հեռավար):*

Երկրորդ նիստում (նախագահող՝ պ. գ. թ. Հասմիկ Ամիրջանյան*) հանդես եկան՝ ԱՄՆ-ից անկախ հետազոտող* Նաթան Պետրոսեանը՝ *«Կիլիկիան եւ քեմալական շարժումը» (հեռավար), ՊԻ ավագ գիտաշխատող, պ. գ. թ.* Անի Ֆիշենկճեանը՝ *«Տէր Յարութիւն քահանայ Եսայեանի նամակները կիլիկահայ գաղթականութեան մասին», ՀՊՄՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ, Գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալ, պ. գ. դ., պրոֆ.* Սամվել Պողոսյանը՝ *«Կիլիկիայի ազատագրումը հայկական լեգեոնի ուժերով», ՀՅԹ հետազոտող* Հեղինե Հովհաննիսյանը՝ *«Ռուբեն Հերյանը և հայկական լեգեոնի անդամների մասնակցությունը որբահավաքին», ՊԻ ավագ գիտաշխատող, պ. գ. թ., դոցենտ* Արմենուհի Ղամբարյանը՝ *«Կիլիկիան և Միացյալ Հայաստանն ԱՄՆ մերձարևելյան քաղաքականության շրջանակներում (1919–1920 թթ.)», ԳԻ առաջատար գիտաշխատող, բ. գ. դ.* Պետրոս Դեմիրճյանը՝ *«Հաճընի 1920 թ. ութամսյա դյուցազնամարտի և հայության ճակատագրի արտացոլումը Սարգիս Վահագնի «Հաճը՛նը սիրուն» նոր վեպում» զեկուցումներով:*

Երրորդ նիստի (նախագահող՝ ՊԻ նոր պատմության բաժնի ավագ գիտաշխատող, պ. գ. թ., դոցենտ Գեղամ Հովհաննիսյան*) ընթացքում լսեցին ՊԻ առաջատար գիտաշխատող, պ. գ. դ.* Գայանե Մախմուրյանի՝ *«Ֆրանս-թուրքական գաղտնի բանակցությունները Կիլիկիայում զինադադար հաստատելու և Սևրի պայմանագրի մասին (1920 թ. մայիս-հունիս ամիսներին)», ՀԱԻ առաջատար գիտաշխատող, բ. գ. դ.* Վերժինե Սվազլյանի՝ *«Կիլիկիայի հայերի ինքնապաշտպանական մարտերը ըստ ականատես վերապրողների վկայությունների» (հեռավար), ՀՊՄՀ համաշխարհային պատմության ամբիոնի վարիչ, պ. գ. դ., պրոֆ.* Խաչատուր Ստեփանյանի՝ *«Կիլիկիայի հայության քաղաքական դրությունը 1921 թ.՝ ըստ Հ. Յ. Դաշնակցության պատմության կենտրոնական արխիվի վավերագրերի», ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասպիրանտ, դասախոս* Մարիամ Թովակյանի՝ *«Կիլիկիան ֆրանս-թուրքական հարաբերությունների դինամիկայի համատեքստում 1920–1922 թթ.» (հեռավար) և պ. գ. թ.* Գեղամ Հովհաննիսյանի՝ *«Կիլիկիայում և նրա շուրջը ծավալած Վերակազմյալ հնչակյանների գործունեությունը 1908–1921 թթ.» զեկուցումները:*

Յուրաքանչյուր նիստի վերջում զեկուցողները պատասխանեցին մասնակիցների հարցերին, տեղի ունեցան քննարկումներ: Գիտաժողովում կարդացված զեկուցումները կհրատարակվեն «Կիլիկիայի հայությունը 1908–1922 թթ.» վերտառությամբ ժողովածուում:

Գիտաժողովի արդյունքներն ամփոփեց պ. գ. դ. Ռ. Սահակյանը:

ՆԻՆԵՏԱ ԱԴԱՄՅԱՆ